

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ - ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՏՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՇԵՄԵՐ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ. մարտի 24-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև՝ Օրենքի¹ նախագիծ), որով առաջարկվում է բարձրացնել զրպարտության և վիրավորանքի համար նախատեսված դրամային փոխհատուցումների վերին շեմերը:

Հաշվի առնելով ներկայումս զրպարտության և վիրավորանքի գործերով դատական հայցերի լայն տարածումը և կարևորելով այս ոլորտում հանրության տեղեկացվածությունը՝ սույն ակնարկում ներկայացնում ենք զրպարտության և վիրավորանքի ընդհանուր բնութագիրը և դրանց դեպքում օրենքով նախատեսված դատական պաշտպանության միջոցները՝ հատկապես անդրադառնալով դրամական փոխհատուցմանը:

¹ Տե՛ս, http://parliament.am/draftreading_docs7/P-665_DR2.pdf?fbclid=IwAR04pu13AuCmqg13qHKxMmNo-XYzpW4Y7Ev41AYej8Q25KHAi-KAwGNkMTs :

Ըստ Նախագծի հիմնավորումների՝ փոխհատուցման սահմանաչափերի բարձրացումը պայմանավորված է նրանով, որ. «Ներկայումս բավականին լայն տարածում է գտել համացանցի միջոցով անձանց կարծիքն ազատ արտահայտելու համար անհիմն վիրավորելը, որը դրսևորվում է անպարկեշտ և անբարո արտահայտություններ հնչեցնելով, ինչն իր բացասական հետևանքներն է թողնում հանրության շրջանակներում: Բացառություն չի կազմում նաև անձանց հրապարակային զրպարտելու ինստիտուտը, որը դրսևորվում է իրականությանը չհամապատասխանող, անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող տվյալներ հրապարակային ներկայացնելով»:

1. ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1, մաս 2):

Արտահայտությունը վիրավորական կարող է համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը
- արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա,
- արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով:

2. ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1, մաս 3):

Արտահայտությունը զրպարտող համարելու համար անհրաժեշտ է հետևյալ նախապայմանների առկայությունը՝

- անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ,
- փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,
- ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը,

- ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

3. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԵՎ ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ զրպարտության և վիրավորանքի գործերով հայցվորն իրեն հրապարակայնորեն զրպարտողից և/կամ վիրավորողից կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը

ոչ նյութական պահանջներ՝

- ներողություն խնդրելու և/կամ (վիրավորանքի դեպքում),
- հերքում հրապարակելու պահանջ և/կամ (զրպարտության դեպքում),
- կրած ոչ նյութական վնասի դիմաց՝ համարժեք նյութական փոխհատուցման պահանջ և/կամ,

նյութական պահանջներ՝

- զրպարտության և/կամ վիրավորանքի հետևանքով կրած գույքային վնասի հատուցման մասին պահանջ:

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՈՐՊԵՄ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Ինչպես նշել էինք ակնարկի սկզբում, Օրենքի նախագծով բարձրացվում է զրպարտության և վիրավորանքի դեպքում նախատեսված դրամական փոխհատուցման վերին շեմերը, մասնավորապես՝

- վիրավորանքի դեպքում վերին շեմ է սահմանվում **3 միլիոն ՀՀ դրամը**, ներկայիս **1 միլիոն ՀՀ դրամի** փոխարեն,
- զրպարտության դեպքում վերին շեմ է սահմանվում **6 միլիոն ՀՀ դրամը**, ներկայիս **2 միլիոն ՀՀ դրամի** փոխարեն:

Խոսքի ազատության իրավունքը, իհարկե բացարձակ իրավունք չէ, և Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, այն է՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, կարող է սահմանափակվել: Սահմանափակումները, սակայն, պետք է համապատասխանեն Սահմանադրությամբ սահմանված պահանջներին և պետք է

խստորեն մեկնաբանվեն, և որևէ սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով ապացուցվի²:

Խոսքի ազատության իրավունքը կիրառվում է ոչ միայն այն տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք կարող են ընկալվել դրական կամ դիտարկվել որպես անվնաս կամ անտարբեր, այլ նաև այնպիսի տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և տեսակետների բազմազանության պահանջները, առանց որոնց՝ «ժողովրդավարական հասարակությունը» չի կարող գոյություն ունենալ³:

Օրենքի նախագիծը սահմանափակում է խոսքի ազատության իրավունքը. իրավունք, որը ժողովրդավարական հասարակության ամենակարևոր հիմնասյուններից է, ժողովրդավարության զարգացման և յուրաքանչյուր անձի ինքնադրսևորման հիմնական պայմաններից մեկը⁴: Այս իրավունքը պաշտպանված է, ինչպես Սահմանադրության 42-րդ հոդվածով, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

Պետք է նշել, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1577(2007) բանաձևի համաձայն վեհաժողովը առաջարկել էր՝ սահմանել ողջամիտ առավելագույն սահման գրպարտության գործերով վնասի փոխհատուցման գումարի չափի առումով, այնպես, որպեսզի չվտանգվի **պատասխանատու մամուլի** կենսունակությունը:

Սահմանադրական դատարանը դեռ 2011թ-ին իր թիվ ՄԴՈ-997 որոշմամբ անդրադառնալով գրպարտության և վիրավորանքի գործերով վնասի փոխհատուցման գումարի առավելագույն չափերին: ՄԴ-ն օրենսդիր մարմնին առաջարկել էր **վերանայել փոխհատուցման առավելագույն սահմանը՝ նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը**: Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանում փոխհատուցման վերին սահմանի և բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունն ավելի մեծ է, քան մի շարք Եվրախորհրդի անդամ երկրներում⁵:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վիրավորանքի և գրպարտության դեպքում փոխհատուցման չափերի համաչափությունը գնահատելիս, ի թիվս այլնի, հաշվի է առնում դիմողի տնտեսական վիճակի համար վնասի չափի հետևանքները, ինչպես նաև

² Bedat v. Switzerland, կետ 48:


³ Նույն տեղում:

⁴ Handyside v. the United Kingdom, կետ 49:

⁵ ՄԴՈ-997, ընդունվել է 15.11.2011թ.:

այնպիսի տնտեսական ցուցանիշներ, ինչպիսիք են, օրինակ՝ պետությունում գործող նվազագույն աշխատավարձի չափը⁶:

Հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը 2011թ-ին տնտեսական ցուցանիշների և փոխհատուցման վերին սահմանների համադրության արդյունքում եկել էր այն եզրահանգման, որ անհրաժեշտ է վերանայել դրանք իջեցնելու նպատակով՝ ստորև կներկայացնենք 2011թ-ի համեմատությամբ 2020թ-ի տնտեսական ցուցանիշները, որոնք հնարավորություն կտան պարզել, թե արդյո՞ք փոխհատուցման վերին սահմանները այդչափ բարձրացնելը համահունչ է առկա տնտեսական վիճակին, թե ոչ:



7

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Համադրելով վերը նշված աղյուսակում ներկայացված տնտեսական ցուցանիշների աճը Օրենքի նախագծով⁸ գրպարտության և վիրավորանքի դեպքում վնասի փոխհատուցման վերին շեմերի բարձրացման հետ և նաև հաշվի առնելով կորոնավիրուսայն վարակի և 44 օրյա պատերազմի արդյունքում տնտեսությանը հասցված վնասները՝ ակնհայտ է դառնում դրանց անհամապատասխանությունը առկա տնտեսական վիճակին: Փոխհատուցման այդչափ բարձր սահմաններ նախատեսելը կարող է լինել ոչ համարժեք միջոց, որի

⁶ European Court of Human Rights, Guide to Article 10 of the Convention – Freedom of expression, կետ 255:

⁷ Տնտեսական ցուցանիշների վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջից՝ <https://www.armstat.am/am/>:

արդյունքում անհամաչափորեն կսահմանափակվի Սահմանադրության 41-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության իրավունքը:

Նախագիծն երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից, սակայն, ՀՀ նախագահի կողմից այն չի ստորագրվել և ուղարկվել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ նախագծի սահմանադրականության հարցը որոշելու նպատակով:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼ

Մեր ընկերության դատական թիմն ունի զրպատության և վիրավորանքի գործերով ներկայացուցչություն իրականացնելու բազմամյա փորձ: Այնպես որ, դիմեք մեզ՝ ստանալու համար պրոֆեսիոնալ իրավաբանական խորհրդատվություն, աջակցություն և պաշտպանություն:

Ծանուցում. Այստեղ ներկայացված մտքերը չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն

ՀԵԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Իրավախորհրդատու - փաստաբան
havetisyan@tk.partners

